



ՀՅԴ Նախընտրական ծրագիրը կարդալ էջ 4-5

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Սիմոն եւ Մարալ Հասրոճեան Առաջնորդարանին կը նուիրեն \$292,825 արժող քանդակ մը, էջ 7

Աշխատանքի Հրաւեր, Ոչ Թէ Ամբոխավար Խոստումներ, էջ 8

Հայաստանի Նախընտրական Քարոզարշարը, էջ 8

«Բանաձեւել» հայեցին, էջ 9

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը, էջ 11

«Հայաստան-Գանատա» խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեամբ հանդիպում




Գանատայի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպութեամբ, Մարտ 8-ին Օթթաուայի մէջ կայացաւ «Հայաստան-Գանատա» խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան 2017 տարեկըջանի առաջին նիստը: Հանդիպման ներկայ էին խմբակցութեան նախագահ Առնոլտ Չան եւ փոխ նախագահներ Հարըլտ Ալպրէխթ եւ Ալեքսանտր Պուլրիս, ինչպէս ՀՀ դեսպանատան հիւպատոս Սասուն Յովհաննիսեան:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Գանատա-Հայաստան քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւններու ամրապնդման կապուած շարք մը հարցեր: Ժողովը որոշեց նաեւ նամակ յղել Գանատայի իշխանութիւններուն, որպէսզի կառավարութիւնը նկատի ունենայ Հայաստանի մէջ գանատական դեսպանատուն հաստատելու հարցը:

ՀՈՐԻԶՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ 2017

Միացէ՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը

Մանրամասնութիւնները կարդալ ծանուցումներու ներդիրին մէջ



2017 HR-V

STARTING FROM
\$20,950*



*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian



HONDA



2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,
Laval, QC H7T 1R3
(450) 978-2333

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul. Des Sources,
Roxboro, QC H8Y 3C5
(514) 685-5050

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

225 Rue Peel
Montréal, QC H3C2G6
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

20 Ashtonbee Road
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

www.groupeadonis.ca

Suivez-nous !





Հ.Յ.Դ. ՄԻԵՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹՅՈՒՆ

ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱՅ ԵՐԹԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՄԻՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Նուիրում՝

ՀՅԴ «Միհրան Փափազեան» Կոմիտեության Հիմնադրության 60-ամեակին

Շաբաթ, 25 Մարտ 2017
Բաստրմաճեան Սրահ, Մոնթրեալ

ՕՐԱԿԱՐԳ

12:15-12:45 Արձանագրություն եւ ընդունելություն
12:45-1:00 Բացման խօսք

1:05-1:30 ՀՅԴ - Ընկերվար Միջազգային կառույց եւ Գանատա
1:30-1:55 Հարց-պատասխան
Դասախօս՝ ընկեր Մարիո Նալպանտեան՝
փոխնախագահ Ընկերվար Միջազգայնականի

1:55-2:05 Դադար

2:05-2:30 ՀՅԴ մամուլի դերը, քաղաքական հասարակությունը եւ հասարակական կարծիքը
2:30-2:55 Կլոր սեղան

Մասնակիցներ՝
Ընկեր Վահագն Գարագաշեան՝ խմբագիր «Հորիզոն» շաբաթաթերթի
Ընկեր Գրիգոր Դերձակեան՝ գիտատնտեսության երկրաչափ եւ պատմաբան
Ընկեր Ռուբեն Ճանապազեան՝ խմբագիր Armenian Weekly-ի

2:55-3:05 Դադար

3:05-3:55 «Վաթսունամեայ երթը կը շարունակուի»
Երիտասարդական քննարկում
Կլոր սեղան

Մասնակիցներ՝
Ընկերուհի Լոռի Ապրաքեան՝ Ս. Յակոբ Ազգային վարժարանի տնօրենության անդամ
Ընկեր տոքթ. Վաղարշ Էհրամճեան՝ ՀՅԴ Կեդրոնական Կոմիտեի նախկին ատենապետ
Ընկեր Ռաֆֆի Տոնապետեան՝ ատենապետ ՀՅԴ Կեդրոնական Կոմիտեի

Համադրող՝ ընկեր տոքթ. Վիգեն Թիւֆէնքճեան՝ Համազգայինի Կեդրոնական վարչության անդամ

3:55-4:15 Խորհրդածողովի ամփոփում եւ փակման խօսք

Խորհրդածողովին կրնան մասնակցիլ, բոլոր
անոնք որոնք հետաքրքրուած են վերոնշեալ նիւթերով:
Արձանագրուելու համար կրնաք գրել mpgomide@centrearmenien.ca հասցէին:

ՀՅԴ Նախընտրական Ծրագիրը

Զորավար Մարտիրոս

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ իբրեւ ազգային, ժողովրդավար, սոցիալխտական եւ յեղափոխական կոլսակցութիւն, մշտապէս պայքարել է հայ մարդու եւ հայութեան քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի համար։

ՀՅ Դաշնակցութիւնը համահայկական ուժ է, ունի ապագայի իր տեսլականը, ունի յստակ՝ մեր ժողովրդի էութիւնից բխող արժէքային համակարգ, ունի իր նպատակներն իրականացնելու կազմակերպական կառոյց ու վերահսկման մեխանիզմ։

ՀՅ Դաշնակցութեան համար բարձրագոյն արժէք են մարդը, նրա արժանապատուութիւնն ու իրաւունքները։ Կարեւոր է, որ Հայաստանի քաղաքացին հաւատայ իր պետութեանը, իր եւ իր ընտանիքի վաղուայ օրուան, մասնակից դառնայ այդ ապագայի կերտմանը։ Հարկ է թռիչքածեւ, կայուն զարգացման նախադրեալներ ստեղծել, թարմ շունչ հաղորդել հասարակական կեանքի բոլոր ոլորտներին։

ՀՅԴ նախընտրական ծրագիրը կառուցուած է բարոյականութեան եւ արդարութեան չափանիշներով։ Այն ուղղուած է ապագային, իսկ մեր հայեացքը՝ երիտասարդներին։

Մեր նպատակն է կառուցել Ազատ քաղաքացիների Հօր եւ Արդար երկիր։

Հայաստանում, Դաշնակցութեան էական դերակատարմամբ, համակարգային փոփոխութիւն է տեղի ունեցել։ Մենք ապրում ենք խորհրդարանական կառավարման պայմաններում։

Այսաձն անշրջելի դարձնելու, խորացնելու եւ աւարտին հասցնելու առաքելութիւն ունի Դաշնակցութիւնը։

Մեր անմիջական մասնակցութեամբ ու ջանքերով երկրում արդէն իսկ վերջ է դրուել մենիշխանութեանը, ժողովրդավարական նոր կարգերի հիմք է ստեղծուել, վերացուել է ընտրութիւնների արդիւնքները կանխորոշող իշխանութիւնների վերարտադրման մեքենան, ընտրական արդար ու թափանցիկ գործընթացների դուռ է բացուել։

Մեզ մնում է տեղայնացնել խորհրդարանական համակարգերի միջազգային առաջդիմական փորձը։

Հայաստանի քաղաքացին Դաշնակցութեանը տուած իր քուէով երաշխաւորելու է լայնածաւալ այս բարեփոխումներն ու երկրի առաջընթացը։

ՀՀ քաղաքացին անձամբ զգալու է կատարուած արմատական, համակարգային փոփոխութիւնների դրական հետեւանքները։ Ակնյայտ են դառնալու նոր համակարգի առաւելութիւնները։

Միայն այս ճանապարհով է հնարաւոր վերացնել ժողովրդի՝ տարիներով կուտակուած արդարացի դժգոհութեան պատճառները, հանել երկիրը տեղապտոյտից եւ փոխադրել կայուն զարգացման հուն։

Մէկ տարի յետոյ այլեւս համապետական քուէարկութեամբ երկրի նախագահ չենք ընտրելու։ Մեր երկրի բոլոր հարցերը որոշուելու են Ազգային ժողովում։

Ահա թէ ինչու կարեւոր է, որ խորհրդարանում լինեն իրական քաղաքական ուժեր, ազգային-պետական եւ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացու շահերով առաջնորդւող քաղաքական գործիչներ։

Սիրելի հայրենակից,

Առաջիկայ ընտրութիւններին մասնակցող քաղաքական բոլոր ուժերը քո աչքի առաջ են։

Համեմատիր եւ կը տեսնես՝ Դաշնակցութիւնը տարբերւում է միւսներից. մենք մի անձի կուսակցութիւն չենք, ունենք մեծ փորձառութիւն, ունենք գաղափարական եւ ծրագրային սկզբունքներ, որոնց երբեք չենք դաւաճանել, հետեւողական ենք, չենք եղել ու չենք կարող ամբոխավար լինել՝ այսօր ասել մի բան, վաղը՝ հակառակը։ Մենք չենք փոխուել. Ե՛ւ ընդդիմութիւն, Ե՛ւ իշխանութիւն եղած ժամանակ Դաշնակցութիւնը առաջադրել է միեւնոյն խնդիրները եւ լուծումներ գտել։

Իշխանութեան մաս դառնալով՝ մենք Հայաստանում նոր սկիզբ ենք դրել՝ մեր կեանքի բոլոր ոլորտներում որակական փոփոխութիւնների սկիզբ։

Մենք սկսել ենք Արցախով։ Միասին յաղթել ենք Արցախում։ Կարողացել ենք ազգային հուն վերագործնել երկրի քաղաքական ուղեգիծը։ Կարողացել ենք կառավարման համակարգ փոխել։

Որքան ուժեղ լինի Դաշնակցութիւնը, այնքան մեր երկիրը կայուն, արդար, խաղաղ կը լինի։ Այնքան բարեփոխումներն արագ, արդիւնաւէտ ու անշրջելի կը դառնան՝ հասնելով իւրաքանչիւր ընտանիքի ու քաղաքացու։ Այնքան մեր ազգային-պետական հիմնահարցերի դրական լուծումը երաշխաւորուած կը լինի։ Այնքան Հայաստանի ինքնիշխանութիւնն ամուր կը լինի։

Վստահէ՛ք Դաշնակցութեանը, Ապրիլի 2ին քուէ-

արկէ՛ք Դաշնակցութեան օգտին, եւ մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կ'ունենանք։

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հաւատաւցած է, որ ազատ, անվտանգ, զարգացող եւ համերաշխ հասարակութիւն ունենալու մեր բոլորի ցանկութիւնը միանգամայն իրադործելի է։

Մեր անկախ պետականութիւնը, ազատագրուած Արցախը մեր արժանապատուութիւնն ու մեր հպարտութիւնն են։ Մենք կարող ենք եւ պէտք է զարգանանք առանց գիջելու։ Սա պէտք է դառնայ համազգային պահանջ, գործողութիւնների յստակ ու վստահութիւն ներշնչող ծրագիր եւ նուիրուած աշխատանք։

Սիրելի հայրենակից,

Վստահելով ՀՅ Դաշնակցութեանը՝ դու քուէարկում ես կայուն զարգացման, համերաշխ հասարակութեան, հօր պետութեան եւ ազատ քաղաքացու օգտին։

ՄԱՐԴԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի տնտեսական քաղաքականութիւնը, անկախութեան վերականգնումից ի վեր, հիմնուած է եղել ինքնակարգաւորուող շուկայի լիբերալ գաղափարաօսութեան եւ «անցումային տնտեսութեան» մօտեցման վրայ։ Պետութիւնն ուսերից թօթափել է պատասխանատուութիւնն իր քաղաքացիների նկատմամբ, թողնելով, որ վայրի մրցակցութեան մէջ յաղթի «ուժեղը առանց հոգալու «պարտուածներ»ի ճակատագրի մասին։

Զարմանալի չէ, որ մեր հայրենակիցները բողոքում են, որ յայտարարուող տնտեսական աճի պայմաններում իրենց կեանքի մակարդակը գնալով անկում է ապրում, քանի որ տնտեսական աճի բարիքներից օգտւում է «յաղթողներ»ի մի փոքրիկ խումբ։ Այսպիսով, պետութիւնն իրեն օտարեց քաղաքացուց, իսկ քաղաքացին օտարուեց պետութիւնից։

Զգալով պետութեան պատասխանատուութիւնը քաղաքացու հանդէպ, քաղաքացին դադարում է պատասխանատուութիւն զգալ պետութեան ու երկրի հանդէպ։ Արդիւնքը վիթխարի ծաւալների հասնող արտագաղթն է, երբ հայ մարդը, չզգալով սեփական հայրենիքի հոգածութիւնը, իր ապագան փորձում է կապել այլ երկրների հետ։ Անհրաժեշտ է արմատապէս փոխել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տրամաբանութիւնը, վերականգնել պետութեան եւ քաղաքացու պատասխանատուութիւնը միմեանց հանդէպ՝ անցում կատարելով նոր Սամանադրութեամբ ամրագրուած սոցիալական շուկայական տնտեսակարգին։

Մենք առաջարկում ենք.

Ապահովել տնտեսական աճի եւ ստեղծուած տնտեսական արդիւնքի արդար բաշխումը հասարակութեան բոլոր անդամների միջեւ։

Հնարաւորութիւններ ստեղծել, որ մարդիկ կարողանան իրացնել աշխատանք ունենալու իրենց իրաւունքը։

Բացառել, որ օրնիբուն աշխատող մարդը չկարողանայ իր ստացած աշխատավարձով հոգալ ընտանիքի նոյնիսկ տարրական կարիքները։ Երբեմն առաջարկուող վարձատրութիւնն այնքան ցածր է, որ աշխատունակ եւ ինքնասիրութիւն ունեցող մարդը գերադասում է նպաստը, այլ ոչ թէ ազնիւ աշխատանքը։ Աշխատանքը պէտք է ապահովի մարդու արժանապատիւ կեանքը, ոչ թէ գոյութիւնը։ Աշխատանքի նուազագոյն վարձատրութիւնը չի կարող ցածր լինել կենսապահովման գամբիւղից։ Աշխատող մարդը պէտք է կարողանայ իրացնել իր հանգստի իրաւունքը, կրթութեան իրաւունքը, առողջապահական ծառայութիւններից օգտուելու իրաւունքը, մշակութային եւ հոգեւոր արժէքների հետ հաղորդակցման իրաւունքը։

Կանխել կեանքի դժուար պայմաններում յայտնուած մեր հայրենակիցների, որոնք աշխատաշուկայում մրցունակ չեն կամ ինչ–ինչ պատճառներով աշխատանք չունեն, լուսանցք մղուելը։ Պետութիւնն ակտիւ քաղաքականութիւն պէտք է իրականացնի աշխատաշուկայ նրանց մուտքն ապահովելու համար եւ պաշտպանի աշխատողների իրաւունքները։

Երաշխաւորել տարեցների բարեկեցիկ ծերութիւնը։ Անթոյաւտրելի է, որ ողջ կեանքն արդար քրտինքով իր հացը վաստակած տարեց քաղաքացին յայտնուի աղքատութեան մէջ։

Ստեղծել առողջապահական ապահովագրութեան այնպիսի համակարգ, որ մեր որեւէ հայրենակից զուրկ չլինի բուժում ստանալու հնարաւորութիւնից։ Որեւէ մէկը չպէտք է տառապի կամ մահանայ, քանի որ դեղի կամ բժշկի փող չունի։

Արտագաղթը կանխելու նպատակով՝ ստեղծել հնարաւորութիւններ, որ հայոց բանակում ծառայած, իր կեանքը յանուն անկախութեան ու ժողովրդի բարօրու-

թեանը վտանգած իւրաքանչիւր երիտասարդ կարողանայ հոգալ իր բնակարանային ապահովուածութեան ու աշխատանքի կարիքները։

Օգնել ֆիզիկական եւ մտաւոր սահմանափակումներ ունեցող անձանց դառնալու հասարակութեան լիարժէք անդամներ, ապահովել նրանց կրթութիւն ստանալու, աշխատելու, տեղաշարժի իրաւունքի լիարժէք իրականացումը։

Նպաստել երիտասարդ ընտանիքների կայացմանը։ Սոցիալ–տնտեսական, բնակարանային, ցածր զբաղուածութեան եւ այլ պատճառներով ուշ ամուսնութիւններն ու ցածր ծնելիութիւնը երկիրը կանգնեցրել են ժողովրդագրական աղէտի եզրին։

Ստեղծել այնպիսի մեխանիզմ, որը կը բացառի բնական ռեսուրսների գերշահագործումը, հիւժոււմը, նուազագոյնի կը հասցնի շրջակայ միջավայրի, այդ թւում՝ մարդու կեանքի եւ առողջութեան վրայ բացասական ազդեցութիւնը, կ'ապահովի բնական ռեսուրսների համալիր կառավարումը եւ դրանից ստացուող եկամուտների բաշխումը հասարակութեան բոլոր անդամների միջեւ։

Բնական ռեսուրսները՝ հողը, ընդերքը, ջուրը, կենդանական ու բուսական աշխարհը, անտառը, բնական լանդշաֆտներն ու մթնոլորտային օդը, համաժողովրդական սեփականութիւն են։ Այս բնական կապիտալը ոչ միայն ներկայ, այլեւ ապագայ սերունդների համար է։ Մինչդեռ դրանց անխնայ ու չհամակարգուած շահագործումը ոչ միայն բաւարար չափով չի նպաստում քաղաքացիների բարեկեցութեան աճին, այլեւ խնդիրներ է յարուցում ներկայի եւ ապագայի առումով։

Ներդնել ջրային ռեսուրսների աւտոմատ կառավարման համակարգեր, ընդլայնել ամբարուող ռազմավարական ջրային պաշարները։

Վարել ակտիւ հայրենադարձման քաղաքականութիւն, նպաստել, որ հայրենիքից հեռացած մեր համաքաղաքացիները եւ սփիւռքահայերը վերադառնան իրենց երկիր՝ քանի դեռ նրանց սերունդները չեն ուժացուել ու չեն դադարել հայ լինելուց։ Հայրենիքից հեռացածները եւ տարիներ ի վեր հայկական Սփիւռքում հանգրուանածները այլ երկրների տնտեսական, գիտական, մշակութային, մարզական էլիտայի մաս են։ Հայրենադարձութեան բարենպաստ պայմաններ ստեղծելով՝ այդ ներուժն ու կարողութիւնը կը ծառայեն մեր բոլորի հայրենիքին։

ԲԻԶՆԵՍԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Եթէ այսօր մեր գործարարներին հարցնես, թէ պետական ինչ աջակցութեան կարիք ունեն, շատերը կը պատասխանեն. «Թող չխանգարեն, դա կը լինի ամենամեծ օգնութիւնը»։ Նման իրավիճակն այլեւս անընդունելի է։ Պետութիւնը պէտք է կանգնի գործարարի կողքին, աջակցի նրան, ապահովի մրցակցութեան արդար պայմաններ եւ գործարարութեամբ զբաղուելու յստակ կանոններ։ Պետութիւնը պէտք է պատրաստ լինի մասնաւորի հետ համագործակցաբար կիսել բիզնես ռիսկը, առաջնորդել այն բնագաւառներում, որտեղ այդ ռիսկն աւելի մեծ է կամ որտեղ շահութաբերութիւնը աւելի ցածր է, կամ մասնաւոր ֆինանսաւորումը բացակայում է։ Նոյնիսկ ամենալիբերալ ու պահպանողական քաղաքական ուժերն ամբողջ աշխարհում աջակցում են իրենց երկրների ձեռնարկութիւններին։ Մինչդեռ մենք մեր ձեռնարկութիւններին թողել ենք միայնակ համաշխարհային մրցակցութեան մէջ։

Մենք առաջարկում ենք.

Ստեղծել արդար պայմաններ ձեռնարկատիրութեամբ զբաղուելու համար։ Հայաստանը որքան էլ բարձր տեղեր գրաւի միջազգային վարկանիշային ցուցակներում, միեւնոյն է, դա չի նուազեցնում մեր ձեռնարկատէրերի դժգոհութիւնները տնտեսվարման միջապայրից։ Փոքր եւ միջին ձեռնարկութիւնները, որոնք ոչ միայն եկամուտ եւ աշխատանք են ապահովում, այլեւ հնարաւորութիւն են ստեղծում ինքնադրսեւորուելու ու արարելու, յաճախ խոշոր ընկերութիւնների գոհ են դառնում։ Բանկերը, վարկային կազմակերպութիւնները, տնտեսական առաջընթացն ապահովելու փոխարէն, յաճախ նմանում են վաշխառուների՝ անիրատեսական եւ ստրկացնող վարկաւորման պայմաններով։

Առաջնային համարուող, ռազմավարական եւ սոցիալական նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւնների հետ, պետութիւն–մասնաւոր հատուած գործընկերութեան շրջանակներում, կիսել բիզնես ռիսկը եւ ապահովել մատչելի ֆինանսաւորում։ Պետութիւնը պէտք է վերանայի տնտեսական հարցերում պասիւ (կրաւորական–նմբ.) դիտորդի իր կարգավիճակը։ Անհրաժեշտ է առաւել ակտիւօրէն աշակցել այդ ձեռնար-



կուլթիւններին, նրանց հետ ստեղծել համատեղ ընկերութիւններ, տրամադրել վենչուրային ֆինանսաւորում, փոխառութիւններ եւ այլ արտօնութիւններ:

Աջակցել հայրենական արտադրողին: Մեր շատ ձեռնարկութիւններ չեն դիմանում արտասահմանեան արտադրողների ու ներմուծողների հետ մրցակցութեանը՝ վերջիններիս կողմից իրականացուող գնագցման ոչ ազնիւ քաղաքականութեան պատճառով: Հայ գիւղացին չի կարողանում վաճառել իր արդար քրտինքով աճեցրած բերքը, քանի որ օտար ապրանքով ողողւած է մեր երկիրը: Պետութիւնը պէտք է մտածի իր արտադրողի մասին:

Ուժեղացնել մենաշնորհների եւ անբարեխիղճ մրցակութեան դէմ պայքարը՝ խստացնելով մրցակցութեան համար պատիժների համակարգը եւ երաշխաւորելով ազատ մուտքը շուկայ:

Թեթեւացնել տեսչական բեռը, գիտակցել, որ տեսչական ստուգումները պէտք է ուղղուած լինեն միայն անբարեխիղճ տնտեսվարողների դէմ եւ չպէտք է մահակ դառնան բարեխիղճ ձեռնարկութիւնների գլխին:

Կրթական պետական պատուէր ձեւաւորելիս առաջնորդուել տնտեսութեան արդի եւ հեռանկարային կարիքներով: Բիզնեսը, գիտական ու կրթական համակարգերը պէտք է սերտօրէն համագործակցեն:

Վերանայել բնական մենաշնորհների կողմից տրամադրուող ծառայութիւնների գները: Այժմ կիրառուող գներն իրատեսական ու մատչելի չեն շատ ձեռնարկատէրերի համար, փոխարէնը՝ բնական մոնոպոլիաներին գերշահոյթ են ապահովում:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պետական կառավարման համակարգն ունի արմատական բարեփոխումների կարիք: Հանրային ծառայութիւնը (ներառեալ քաղաքացիական ու համայնքային ծառայութիւնը) պատիւ է, որին պէտք է արժանանան միայն բարձր մասնագիտական ու մարդկային որակների տէր անձիք: Պետական չինովնիկը, ով կոչուած է ծառայելու քաղաքացուն, երբեք չպէտք է իրաւունք ունենայ քաղաքացու հետ խօսել վերեւից, ամբարտաւան տիրոջ կեցուածքով: Իւրաքանչիւր պաշտօնեայ պէտք է անձնական պատասխանատուութիւն կրի իր արածի ու չարածի համար եւ երբեք փորձ չանի իր պաշտօնական դիրքն օգտագործել անձնական շահի նպատակով: Որեւէ պարագայում պէտք է բացառուի շահերի բախումը: Միայն այս դէպքում հանրային ծառայութիւնը, որը պէտք է արժանապատիւ վարձատրուի, հրապուրիչ կը լինի նուիրուած ու բանիմաց կադրերի համար:

Մենք առաջարկում ենք.

Ապահովել պետական մարմինների գործունէութեան հրապարակայնութիւնն ու թափանցիկութիւնը: Պատասխանատուութիւնը պէտք է լինի հասցեական ու անձնաւորուած: Պետական կառավարման իւրաքանչիւր մարմնի համար պէտք է սահմանուեն արդիւնաւէտութեան գնահատման առանցքային ցուցանիշներ: Իւրաքանչիւր պաշտօնեայ պէտք է իմանայ, թէ որոնք են իր իրաւունքներն ու պարտականութիւնները եւ ինչի համար է պատասխանատուութիւն կրելու:

Ներդնել հանրային ծառայողների ու նրանց ընտանիքների արժանավայել կենսամակարդակ երաշխաւորող վարձատրութեան համակարգ: Վարձատրութիւնը պէտք է բաւարար լինի, որպէսզի հանրային ծառայողը չփորձի եկամտի այլ աղբիւրներ փնտրել՝ յաճախ չարահամբ

շահելով իր պաշտօնական դիրքը: Ընդլայնել հանրային ծառայութեան սոցիալական փաթեթից օգտուողների շրջանակը՝ ներառելով առողջապահութեան, մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան ոլորտի բոլոր աշխատակիցներին:

Վարել արհեստավարժութեան եւ հանրային վստահութեան չափանիշներին համապատասխանող կադրային քաղաքականութիւն՝ շարունակաբար ներգրաւելով երիտասարդներին պետութեան կառավարման գործում:

Գործադրել շահերի բախման հնարաւոր դէպքերը բացայայտելու ու կանխելու, անօրինական գործունէութեան համար անխուսափելիօրէն պատասխանատուութեան ենթարկելու, բիզնեսն ու քաղաքական, վարչական իշխանութիւնը տարանջատելու ամբողջական համակարգ:

Ընդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան ակտիւ մասնակցութեամբ ստեղծել կոռուպցիայի դէմ պայքարի անկախ մարմին: Այն պէտք է զբաղուի կոռուպցիայի աղաղակող եւ հանրութեան ուշադրութեան կենտրոնում գտնուող դէպքերով, այլ ոչ թէ աշխատանքի պատրանք ստեղծի:

ԱՐՑԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մենք ձգտում ենք գոյատեւել որպէս ազգ, կերտել Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստան, ուստի հօօր, մեր անվտանգութիւնը երաշխաւորող պետութիւն կառուցելուն այլընտրանք չկայ: Մեր անկախ պետականութեան վերակերտումը սկսուեց արցախեան գոյամարտով, նրա գոյութիւնը պայմանաւորուած է արցախեան ճակատում մեր յաղթանակով: Յստակ պէտք է գիտակցել, որ չկայ առանձին Արցախի հարց: Արցախը հայկական հարցի, Հայ Դատի անբաժան մաս է: Այս հարցում մեր դիրքորոշումն անփոփոխ է՝ Արցախը պէտք է վերամիաւորուի Մայր Հայաստանի հետ: Արցախի անկախութիւնը մեզ համար մարտավարական նշանակութիւն ունեցող ժամանակաւոր լուծում է:

Մենք ինքներս պէտք է ապահովենք մեր երկրի անվտանգութիւնը՝ քաջ գիտակցելով, որ միայն պատերազմին պատրաստ լինելն է կանխում պատերազմի վտանգը: Այս հարցում միակողմանի զիջումների մասին յայտարարութիւնները միայն մօտեցնում եւ աւելի իրական են դարձնում պատերազմի սպառնալիքը:

Հայրենիքի պաշտպանութիւնը մեր բոլորիս սրբազան պարտականութիւնն է՝ անկախ մեր քաղաքական հայեացքներից, սոցիալական կարգավիճակից, եկամտի մեծութիւնից: Բանակը պէտք է գտնուի բոլորիս հոգածութեան կենտրոնում: Մենք պէտք է դասեր քաղենք ապրիլեան պատերազմից:

Հայաստանը պէտք է վարի անկախ արտաքին քաղաքականութիւն՝ հիմնուած բացառապէս ազգային շահի եւ պետութեան հեռանկարային ռազմավարական զարգացման տեսլականի վրայ: Մենք ամբրիկամէտ, ոռւսամէտ, եւրոպամէտ չենք, մենք հայամէտ եւ հայաստանակենտրոն ենք: Արտաքին քաղաքականութեան վեկտորն ընտրելիս պէտք է առաջնորդուենք բացառապէս մեր ազգային շահով: Մեր կազմած դաշինքները պէտք է լինեն ոչ թէ ընդդէմ որեւէ կողմի, այլ բացառապէս յանուն մեր նպատակների իրականացման:

Մենք առաջարկում ենք.

Ամրապնդել Հայաստանի Հանրապետութեան եւ

Արցախի Հանրապետութեան ռազմաքաղաքական համագործակցութիւնը, տնտեսական, ֆինանսական, սոցիալական, մշակութային, կրթական համարկումը:

Ջանքեր գործադրել Արցախն իր ապագային վերաբերուող բանակցութիւններում որպէս լիիրաւ կողմ ներգրաւելու համար:

Ազգ-բանակ հայեցակարգի տրամաբանութեամբ զարկ տալ հայրենական գիտական եւ տեխնոլոգիական մտքի վրայ հիմնուած ռազմաարդիւնաբերական համալիրի ստեղծմանը: Հակառակորդն ունի նաւթային դոլարներ, մենք ունենք տաղանդաւոր գիտնականներ, գիւտարարներ, ինժեներներ:

Խրախուսել պրոֆեսիոնալ-կամաւոր զինուորական ծառայութեան շրջանակի ընդլայնումը: Պարտադիր զինուորական ծառայութեան զօրակոչուած երիտասարդ զինուորի կողքին միշտ պէտք է կանգնած լինի պրոֆեսիոնալ զինուորականը:

Սպաների ու պայմանագրային զինծառայողների աշխատավարձերը համապատասխանեցնել արժանավայել ապրուստի պահանջներին: Սպան ու զինուորը, ովքեր ամէն օր իրենց կեանքը վտանգի են ենթարկում, չպէտք է նիւթական նեղութիւն զգան:

ՀՀ արտաքին քաղաքականութեան օրակարգի անքակտելի մաս դարձնել Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ փոխհատուցման հարցերը, բացառել Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը թուլացնող որեւէ գործողութիւն: Ձեւաւորել անհրաժեշտ դիմակայութիւն ընդդէմ թուրք-ադրբեջանական տանդեմի հակահայկական ծրագրերի: Չեղարկել մեր ազգային շահերին հակասող հայ-թուրքական արձանագրութիւնները:

Վրաստանի հետ յարաբերութիւնները կառուցել բարեկամութեան ու ազգային շահերի փոխադարձ յարգանքի սկզբունքների վրայ: Բարիդրացիական յարաբերութիւններն իրենց դրական ազդեցութիւնը կ'ունենան ջախսահայութեան եւ ընդհանրապէս վիրահայութեան իրաւունքների լիարժէք իրականացման վրայ:

ՀՀ արտաքին քաղաքականութեան մէջ առաջնորդող սկզբունք համարել այն, որ Հայոց պետականութիւնը ոչ միայն Հայաստանի քաղաքացիների, այլեւ համայն հայութեան ազգային նպատակների իրականացման երաշխաւորն է: Ըստ այդմ՝ ամէն ինչ անել սփիւռքահայութեանը հայոց պետականութեան գործընթացում լիարժէք ներգրաւելու համար: Գործադրել Հանրապետութեան եւ հայութեան տարբեր հատուածների առջեւ ծառացած մարտահրաւէրների յաղթահարման, համագգային ներուժի բացայայտման եւ օգտագործման ամբողջական ռազմավարութիւն:

* * *

Սիրելի՛ հայրենակիցներ,

Մենք հաւատում ենք, որ նոր սկիզբ ենք դրել:

Մենք լաւատես ենք:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կազմակերպուած է, ունի կամք եւ վճռականութիւն՝ առաջնորդելու մեր ժողովրդի երթը դէպի Ազատ, Արդար եւ Բարեկեցիկ հասարակութիւն: Մենք հաւատում ենք Արդար երկրի եւ Ազատ քաղաքացու ստեղծագործ ներուժին: Սա է Հզօր Հայաստան կերտելու, հպարտ քաղաքացի ունենալու գրաւականը: Մենք վճռական ենք: Մեզ անհրաժեշտ է ձեր քուէն ու վստահութիւնը:

Վստահէ՛ք Դաշնակցութեանը, Ապրիլի 2ին քուէարկէ՛ք Դաշնակցութեան օգտին, եւ մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կ'ունենանք:

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ 2016 ՏԱՐԵԹՐԶԱՆԻ ՆԻԺԱԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(20 Յուն. 2016 - 8 Փետր. 2017)

Տարեցներու Միութիւնը իր 20 Յուն. 2016–ի ան–դամական ընդհ. ժողովին, լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան բարոյական եւ նիւթական գործունէութեանց տեղեկագրերը եւ առ այգ յայտնուած կարծիք–ներն ու առաջարկները նոր տարեշրջանին համար՝ 2016–ի, ընտրեց նոր վարչութիւն մը բաղկացեալ հետեւեալներէն՝ Ամէնճեան Հմայեակ, Գանոնճեան Իտա, Գույումճեան Անի, Նաճարեան Լեոն, Նշանեան Արամ, Տէմիրճեան Գէորգ, Փիլիկեան Շուշան:

Իր առաջին նիստին, վարչութիւնը ընտրեց իր գլւանը եւ կատարեց պաշտօններու բաշխումը հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Նաճարեան Լեոն,

Փոխ ատենապետ՝ Գույումճեան Անի (եւ ձեռ–նարկներու պատասխանատու)

Ատենադպիր՝ Փիլիկեան Շուշան (եւ անդամակա–նի պատասխանատու)

Գանձապահ՝ Ամէնճեան Հմայեակ

Հաշուապահ՝ Տէմիրճեան Գէորգ

Գոյքապահ՝ Նշանեան Արամ

Խորհրդական՝ Գանոնճեան Իտա

Դրամատան մօտ ստորագրելու իրաւունք տրուեցաւ Նաճարեան Լեւոնի, Ամէնճեան Հմայեակի եւ Նշանեան Արամի:

Հաշուեքննիչներ նշանակուեցան Գաբրիէլեան Անահիտ, Ալեքսանեան Լիւսի եւ Մելիքեան Անթառամ: Վերջնոյս վաղաժամ մահով, նոր անդամ նշանակուեցաւ Մահսրէճեան Ալիս:

Ձեռնակներու եւ ճաշկերոյթներու յանձնախումբի անդամներ նշանակուեցան Ալեքսանեան Լիւսի, Մելիքեան Անթառամ, Կարապետեան Վարդուհի, Նաճարեան Սիլվիա, Պասմաճեան Սօնա, Նաճարեան Լիւսի, Վարդանեան Գարեգին եւ Մելիքեան Պերճ: Յետագային աւելցուեցան նաեւ Խորասանճեան Ռոզիկ եւ Քապուսս Փօլին:

Վարչութիւնը կազմեց նաեւ շաբաթական հերթա–կան հաւաքներու ընթացքին սպասարկուելիք ճաշերու եւ կատարուելիք զբօսապտոյաներու ցանկը, որ պատ–ճենահանուելով ցրուեցաւ միութեան անդամ–անդա–մուհիներուն:

Վարչութիւնը որոշեց իր հերթական ժողովները գումարել ամիսը մէկ անգամ՝ ամսուան առաջին երեք–շաբթի օրերուն: Ցարգ գումարած ենք 12 ժողով եւ բազմաթիւ խորհրդակցական ժողովներ:

Ա–Անդամական: Տարեշրջանիս սկիզբը միու–թիւնը ունէր 207 անդամ–անդամուհիներ: Մահացած են 8–ը, իրենց երկարատեւ բացակայութեան եւ վար–չութեան հրաւէրներուն չպատասխանելուն համար դադրած են 13 անդամ–անդամուհիներ, իսկ ունեցած ենք 34 նոր արձանագրուողներ, որով, մեր այսօրուան թիւն է 220 անդամ–անդամուհիներ:

Բ–Կատարուած աշխատանքներ: Նկատի ունենա–լով որ ցարգ մեր գործածած սառնարանները այլեւս չէ–ին կրնար մեր ունեցած գործունէութեան գոհացում տալ, ունեցանք նոր աւելի մեծ սառնարան մը եւ նոր freezer մը:

Ե–նամակներով մեր ձեռնակներու յայտարարու–թիւններու սփռումը շարունակուեցաւ, որուն շնորհիւ ունեցանք աւելի մեծ թիւով մասնակցողներ եւ նոր ան–դամներու արձանագրութիւն: Ե–նամակներու պատաս–խանատուն է Սիլվիա Նաճարեան:

Նամակներ յղուած են երկարատեւ բացականե–րուն եւ ապաքինման մաղթանքներով՝ հիւանդացած–ներու: Այս տարեշրջանին մօտ 25 նամակներ առաք–ուած են վերոյիշեալներուն.

Գ–Ձեռնակներ:

1.– Valentine–ի ձեռնարկ. տեղի ունեցաւ Չորեք–շաբթի 17 Փետր. 2016–ին, մասնակցութեամբ աւելի քան չարիւր ներկաներու: Արժանապատիւ Տէր Գառնիկ Աւ. Քհն. Գոյունեանի խօսքէն ետք, հաւաքոյթը, իր accordion–ով խանդավառեց Toni Guitaras:

2.– Bake sale – անուշեղէններու վաճառք. տեղի ունեցաւ 23 Մարտ 2016–ին: Վաճառքը ձեռք բերաւ գնահատելի յաջողութիւն:

3.– Ս. Յակոբ վարժարանին ի նպաստ հոգաբար–ձութեան ճաշկերոյթին՝ 9 Ապրիլ 2016–ին վարչու–թիւնը ներկայ եղաւ իր լրիւ կազմով, եւ ինչպէս անց–եալին, այս տարի եւս Ս. Յակոբ վարժարանի ֆոնտին նուիրեց 20,000\$:

4.– Պօրտօ–Քարթիէլլիի Table des Ainés–ի ձեռ–նարկին, 15 Ապրիլ 2016–ին, միութիւնս բերաւ իր մաս–նակցութիւնը եւ տեղեկութիւններ փոխանցեց Տարեցնե–րու Միութեան տարած գործունէութեանց մասին: Խօս–քը փոխանցեց Շուշան Փիլիկեան:

5.– «Մայրերու Օրուան տօնակատարութիւն՝ 8 Մայիսին. ներկայ եղան թեմիս հայրապետական ներկա–յացուցիչ Գերշ. Տէր Սուրէն Սրբ. Արք. Գաթարոյեան, Արժ. Տէր Գառնիկ Աւ. Քհն. Գոյունեան եւ մօտ 150 անդամ–անդամուհիներ եւ բարեկամներ: Օրուան պատգամը փոխանցեց Գերշ. Սրբազան Հայրը եւ ապա, ընդառաջելով Տարեցներու Միութեան խնդրանքին, ան սիրով ընդունեց Տարեցներու Միութեան պատուակալ նախագահը ըլլալ, փոխարինելով մեր առաջին նախա–գահը՝ վախճանեալ Տէր Արմէն Աւ. Քհն. Իշխանեանը:

Հաւաքոյթը շարունակուեցաւ խրախճանքով, մասնակցութեամբ երգով՝ Յովիկ Պիլէմճեանի իսկ նուագով՝ Յակոբ Մելքոնեանի եւ Արա Ալեքսանեանի:

6.– «Հայրերու Օր»ուան տօնակատարութիւն 27 Յունիս 2016–ին, մասնակցութեամբ աւելի քան 100 ներկաներու: Այս ձեռնարկին Յովիկ Պիլէմճեան եւ Յա–կոբ Մելքոնեան իրենց երգով եւ նուագով խանդավա–ռեցին մթնոլորտը:

7.– Զբօսապտոյտ դէպի Ste Anne de Bellevue 7 Յուլիս 2016–ին, մասնակցութեամբ 41 անդամ–անդա–մուհիներու, հաճելի պտոյտ մըն էր գետեգրքին:

8.– Այցելութիւն chanteclair–ի զբօսավայրը 4 Օգոստոս 2016–ին, մասնակցութեամբ 47 անդամ–ան–դամուհիներու, օգը շատ տաք ըլլալուն մասնակցողնե–րը պատսպարուեցան զով սրահներու մէջ:

9.– 15–ամեակի տօնակատարութիւն. միութեանս հիմնադրութեան 15–ամեակը տօնուեցաւ 24 Օգոստոս 2016–ին, մասնակցութեամբ հարիւր ներկաներու: Օր–ուան կարկանդակը հատուեցաւ, եւ ապա գնահատագ–րեր ստացան ձեռնարկներու յանձնախումբէն Լիւսի Ալեքսանեան եւ Մէլի Վարդանեան՝ երկար տարիներու իրենց մատուցած ծառայութեանց համար:

10.– Այցելութիւն Հայաստանի դեսպանատուն, Օթթաուա, 19 Սեպտ. 2016–ին, մասնակցութեամբ 30 անդամ–անդամուհիներու: Հանդիպում վսեմաշուք դեսպան Արմէն Եգանեանի եւ իր անձնակազմին հետ՝ ջերմ մթնոլորտի մը մէջ: Տեղի ունեցաւ նաեւ դեսպա–նատան նոր Եռագոյնի բարձրացման արարողութիւն: Միութիւնս դեսպանատան նուիրեց 1000\$–ի գումար մը:

11.– Table des Ainés–ի ձեռնարկ 29 Սեպտ. 2016–ին, որուն ընթացքին Լիւսի Ալեքսանեան ստացաւ գնահատագիր, տարիներու ընթացքին միութեանս գե–ղարուեստական յայտագրերուն իր բերած մասնակցու–թեան համար:

12.– Անուշեղէններու վաճառք 7 Դեկտ. 2016–ին, որուն մեծ թիւով անդամուհիներ եւ բարեկամուհիներ բերին իրենց մասնակցութիւնը, կոկիկ գումար մը ապահովելով միութեան:

13.– Հիւրասիրութիւն–ճաշկերոյթ, 21 Դեկտ. 2016–ին, կազմակերպուած Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ՝ առ ի քաջալերանք եւ գնա–հատանք միութեանս տարած գործունէութեանց, որուն ներկայ եղան թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տէր Բարգէն Սրբ. Արք. Չարեան, ընկերակցութեամբ Ս. Յա–կոբ եկեղեցւոյ հովիւ Արժ. Տէր Գառնիկ Աւ. Քհն. Գո–յունեանի, ինչպէս նաեւ աւելի քան 200 անդամ–ան–դամուհիներ եւ բարեկամներ. ճաշկերոյթը խանդավա–

ռեցին իրենց սիրայօժար մասնակցութեամբ երգով՝ Ար–թիւր Աբգարեան եւ դաշնամուրով Աւօ Նիկողոսեան:

Ընդունելութեան ընթացքին, ձեռամբ փոխ ատե–նապետուհի Անի Գույումճեանի եւ հանդիսավարուհի Լիւսի Ալեքսանեանի, գնահատագրեր տրուեցան Վար–դուհի Կարապետեանի, Սոնա Պասմաճեանի, Լիւսի նա–ճարեանի եւ Սիլվիա Նաճարեանի՝ առ ի գնահատանք իրենց բերած երկարատեւ ծառայութիւններուն:

14.– Հիւրասիրութիւն–ընդունելութիւն միու–թեան վարչութեան կողմէ 22 Դեկտ. 2016–ին, Հայ կեդ–րոնի թիւ 3 սրահին մէջ, ձեռնարկներու յանձախումբին անդամ–անդամուհիներուն, առ ի գնահատանք իրենց մատուցած սիրայօժար ծառայութիւններուն:

Դ–Ներկայութիւն քոյր միութիւններու ձեռնակ–ներուն. այս տարեշրջանին եւս վարչութեան անդամներ ներկայ եղան քոյր միութիւններու կազմակերպած ձեռ–նակներուն, ընդառաջելով իրենց ստացած հրաւէրնե–րուն:

Ե–Խօսք շնորհակալութեան՝ առ որ անկ է. վար–չութիւնս, այսու կու գայ իր շնորհակալութիւնները յայտնելու այն բոլոր հաստատութիւններուն, միու–թիւններուն եւ բարեկամներուն, որոնց քաջալերանքին, աջակցութեան եւ նուիրատուութիւններուն շնորհիւ 2016 տարեշրջանի գործունէութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ.

– Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ պատ. Հոգաբարձութեան, որ այս տարի եւս միւթեանս տրամադրեց Հայ կեդրոնի սրահը, բեմը, խոհանոցը, այլ դիւրութիւններ եւ կազմակերպեց տարեվերջի հիւրասի–րութիւն–ճաշկերոյթը:

– Հ.Յ.Դ. «Միհրան Փափազեան» կոմիտէին, որ կը քաջալերէ մեր գործունէութիւնը եւ միւթեանս զօրա–վիգ կը կանգնի:

– «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրական կազ–մին, որ իր սիւնակներուն մէջ տեղ կու տայ մեր ծանու–ցումներուն:

– Toi Moi et Café–ի սեփականատէրերուն՝ տէր եւ տիկին Սեւան եւ Նաթալի Սթամպուլեաններուն, որոնք կը սատարեն մեր հաւաքներու յաջողութեան:

– Տիար Հմայեակ Թուֆայեանին:

– Boulangerie Seta–ի սեփականատէրերուն՝ տէր եւ տիկին Վարդան եւ Անի Երեւանեաններուն:

– Արա Ալեքսանեանին, որ սիրայօժար եւ իր ու–նեցած փորձառութեամբ կը կազմակերպէ մեր գեղար–ուեստական յայտագիրները:

– Տիկ. Սիրվարդ Նշանեանին, որ սիրայօժար եւ, ամէն տարեշրջանի սկզբնաւորութեան կը պատրաստէ մեր անդամներուն վերանայուած եւ սրբագրուած ան–ուանացանկը:


– Յակոբ Ս. Փիլիկեանին, որ նոյնպէս սիրայօժար կերպով կը գրէ մեր ձեռնարկներու թղթակցութիւնները եւ կ’օժանդակէ մեր տարեկան տեղեկագրի պատրաս–տութեան:

– Անուշեղէններու վաճառքին իրենց կամաւոր մասնակցութիւնը բերող բոլոր տիկիներուն:

– Շնորհակալութիւն նաեւ մեզ քաջալերող բոլոր նուիրատուներուն, անդամ–անդամուհիներուն եւ յանձնախումբերուն, որոնց բերած աջակցութեան եւ սիրայօժար ծառայութեանց շնորհիւ մեր 15–ամեակի տարին՝ 2016–ը եղաւ յաջող եւ բարենպաստ տարի մը:

Մեր տարեշրջանը աւարտած ըլլալով վարչու–թիւնս կու գայ իր հաւաքական հրաժարականը ներկա–յացնելու եւ յաջորդ տարեշրջանի վարչութեան կը մաղթէ փայլուն յաջողութիւններով պսակուած տա–րեշրջան մը:

Հայ Կեդրոնի
Տարեցներու Միութեան Վարչութիւն
Լեւոն Նաճարեան
Ծ. Փիլիկեան
Իտա Գանունճեան



Սիմոն եւ Մարալ Հասրըճեան Առաջնորդարանին կը Գուիրեն \$292,825 արժող քանդակ մը



Տէր եւ Տիկին Սիմոն եւ Մարալ Հասրըճեաններ Ազգային Առաջնորդարանին նուիրեցին արուեստագէտ Կարէն Պետրոսեանի «Կեանքի Ծառը» (Tree of Life) քանդակը, որ արուեստաբան Eric Devlin-ի կողմէ արժեւորուած է \$292,825: Պրոնզէ քանդակը կը կշռէ 235 քիլոկրամ եւ 400x300x450 սանթիմետր բարձրութեամբ:

Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան իր շնորհակալութիւնը յայտնեց Հասրըճեան ամուլին եւ տեղեկացուց, թէ Մոնթրէլ քաղաքի 375 ամեակին առիթով, քանդակը պիտի նուիրուի քաղաքապետարանին, որպէս երախտագիտութիւն եւ խորհրդանիշ Քաղաքապետին ու քաղաքին, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով իրենց ցուցաբերած բարիացակամ կեցուածքին համար:

Արդարեւ, իր տեսակին մէջ այնքան գեղեցիկ այս արուեստի գործը, ինքնին ցայտուն ցուցանիշ մը պիտի դառնայ Հանրութեան առջեւ, թէ հայը իր ստեղծագործ, չինիչ եւ մեղուաջան աշխատանքով ու կեանքին նկատմամբ իր լաւատես խառնուածքով վերստին կ'ընձնուի, կը վերապրի ու կ'անմահանայ:



«ՓՈՔՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԺԱՄ»

Ուրբաթ 17 Փետրուար 2017-ին «Փոքրերու Պատմութեան Ժամ» յայտագիրը վարեց Համազգայնի «ԱՆԻ» պարախումբի եւ «ՔՆԱՐ» երգչախումբի անդամներէն՝ Կորին Գոյունեանը: Ան իր իւրայատուկ առոգանութեամբ ներկայացուց Անահիտ Սարգիսեան-ի «Սեւուլիկ Սարգիկը» եւ «Լուսինին Շապիկը» պատմութիւնները՝ խանդավառելով գրասէր փոքրիկները: Ապա ան Սեւուլիկ Սարգիկին երգը երգելով ու սորվեցնելով, առաւել եւս գրաւեց անոնց ուշադրութիւնը:

Աւելի ուշ, մասնակից փոքրիկները գծեցին իրենց ունկնդրած պատմութիւններուն հերոսներէն մէկը եւ յայտագրի աւարտին անոնք համատեսցին գրքածէւ սիրուն կարկանդակներ, որոնք յատուկ պատրաստուած էին Կորինի ճաշակաւոր ու աշխատասէր մօր, երէցկին Նինա Գոյունեանի կողմէ:

Յաջորդ առաւօտ, շաբաթ 18 Փետրուարին, «Փոքրերու Պատմութեան Ժամ» յայտագրի յանձնախումբի անդամներէն Աւօ Գազանճեան, Սեւան Թապաքեան, Նանոր Շիրինեան, Մեղրի Պաքարեան եւ Անահիտ Պալեան իրենց մասնակցութիւնը բերին Առաջնորդարանի Հայեցի Դաստիարակութեան Խորհուրդի կազմակերպած՝ «Մանուկներու Փառատօն»ին: Համազգայնի կրպակէն ներս, փառատօնին մասնակից փոքրիկներուն ձեռքերը զարդարուեցան իրենց անուան թռչնագիր սկզբնատարով կամ այլ գեղեցիկ նկարներով. նաեւ անոնք ուրախութեամբ գունաւորեցին հայկական մանրանկարչութիւններ եւ հմայուած դիտեցին «ԱՆԻ» պարախումբի անդամներէն՝ Էմմա Գասբերի մենապարը:

Յաջորդ «Փոքրերու Պատմութեան Ժամ»ը տեղի պիտի ունենայ Ուրբաթ 17 Մարտ կէսօրէ ետք ժամը 6:00- 7:00, Համազգային-ի «Մուշեղ Իշխան» գրադարանին մէջ : Անհամբեր կը սպասենք ձեր փոքրիկներուն, որպէսզի միասնաբար վայելենք իւրաքանչիւր հրամցուած պատմութիւն: Անոնց մասնկացութեամբ մեր յայտա-



գիրները յատուկ համ ու հոտ կ'ունենան: Յիշեցնենք, որ մենք այս կարճ ժամանակի ընթացքին նաեւ կը պատրաստենք զանազան աշխատանքներ, որպէսզի մեր պատմութիւնները կենդանացնենք, եւ ամէնէն կարեւորը հայերէնով ծանօթանանք տարբեր տարբեր հետաքրքրական նիւթերու:

Եթէ կ'ուզէք որ ձեր երեխաներն ու թոռները մասնակից դառնան այս հաճելի յայտագիրներուն ու գտնուին նման առողջ ու հաճելի մթնոլորտի մը մէջ, ընկերակցեցէ՛ք մեզի հեռաձայնելով 514 826 1075 կամ գրելով հետեւեալ ե-հասցէին megho7@hotmail.com:

Ձեզի սպասող,

«ՓՈՔՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԺԱՄ»ի յանձնախումբ

SERVING THE ARMENIAN COMMUNITY SINCE 1984 Please call Serge Khatchadourian  STERLING AUTO CENTRE 416.494.9595 3815 Victoria Park Ave. (At Gordon Baker) Toronto, ON M1W 3Y6	Gary Chahinian ABR., Broker of Record - Owner RE/MAX DIAMOND Realty Inc. W torontohomes.ca E gary@remaxdiamond.com 416-258-8892 	 Noor Fine Food™ <i>Gourmet Mediterranean Cuisine</i> 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
Ani Imastounian Sales Representative Direct: 647-403-4046 anirighthome@gmail.com www.imastounian.com  Two Morneau Shepell Centre 893 Don Mills Rd., Suite 112 Toronto, ON M3C 1W3 Office: 416-391-3232 Fax: 416-391-0319 Member of the Toronto Real Estate Board <i>I Appreciate Your Referrals! Thank You</i>	Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com  Each Office is Independently owned and Operated	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) ----- Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com TASTE OF ALEPPO	I.D.A. Part of the <i>Alexia</i> family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164 



905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME
CHEF TO GRILL



www.aniristorante.ca

Fine Dining
Catering
Party Room
FOR ALL YOUR NEEDS

Ա. Յակոբ Եկեղեցույ
Հոգաբարձությունը եւ դպրոցի
տնօրենությունը մեծ հաճությամբ կը
հրավիրեն ձեզի



ՍՈՒՐԲ ԶԱԿՈՐ
ԱՐԳԱՅԻՆ ՎԱՐՅԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՍԻՐԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ի Նպաստ Սուրբ Յակոբ Ազգային
Վարժարանի
Վ. Եւ Ա. Մարաֆեան Նախակրթարանի
եւ Բաասրմաճեան Սրկրորդականի

Հարգւթ,
→ **1 ԱՊՐԻԼ** 2017
Սրեկոյեան Ժամը 6:30 ին

Մոնթրէալի Հայ Կեդրոն



Տեղեկութեանց եւ տեղեր
սպասեռովերու հասար դիմել
Տիկ. Իլլապէլ Եօաննանի
514-979-9350

Կը խնդրենք որ ձեր
ներկայութիւնը հաստատէք մինչեւ
24 Մարտ 2017

Մուտքը նոյ իրաւունքեան
Տուրքէ գերծ կացուցեան տուացգիր
50\$ եւ վեր նոյ իրաւունքեան



Հորիզոն

ՀԱՐԱՐԱԹՅՈՒՆ

Օգոստոս 25 - Սեպտեմբեր 8



Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտույտին, որպեսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մեջ, Արցախի մեր քույրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը:

Տեսարժան վայրերուն մեջ ընդգրկուած են.

Դադիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք... Խրախճանք Դիլիջանի անտառներուն մեջ եւ Արցախի հայկական գիւղերուն մեջ:

Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$3450.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy

Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ համերգներու, պտույտներու (Տաթևի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երեւանի Հանրապետութեան հրապարակ քաղելով 2 վայրկեան է՝ www.hotelaviatrans.am

Արձանագրուելու համար հեռաձայնել 514 332-3757 թիւին:



Հայաստան և Արցախ շրջապտոյտ – 2017

9 օր Հայաստանի Հանրապետություն, 5 օր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Օգոստոս 26

- Ժամանում Երևանի «Ջուարթնոց օդակայան
- Տեղափոխում Երևան
- Իջեանում Ավիատրանս (Aviactrans) հիւրանոց, Երևանի Հանրապետության կրթադարակին մօտ
- Ընթրիք հիւրանոցին մէջ

Օգոստոս 27

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Մեկնում Էջմիածին և մասնակցութիւն Ա. Էջմիածինի Մայր Տաճար կիրակնօրեայ եկեղեցական արարողութեան
- Այցելութիւն «Էջմիածինի գանձերը» թանգարան
- Ճաշ Էջմիածնի մէջ
- Այցելութիւն Ջուարթնոց հեռագիտական եկեղեցի-յուշարձան
- Վերադարձ Երևան
- Ընթրիք
- Հայկական ազգագրական պարերու երեկոյ

Օգոստոս 28

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Այցելութիւն Խոր Վիրապ Մրբավայր
- Ճաշ Արենի գիւղին մէջ
- Արենի գիւղի գինիի գործարան այցելութիւն և գինիի համոտեսում
- Վերադարձ Երևան
- Ընթրիք
- Գիշերային հայկական ճաշ երաժշտութեան երեկոյ

Օգոստոս 29

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Այցելութիւն Զարեկի կամար
- Այցելութիւն Գառնիի հեթանոսական տաճար
- Լաւաշի թխման արարողակարգ Գառնի գիւղին մէջ
- Ճաշ Գառնի գիւղին մէջ
- Այցելութիւն Գեղարդ վանական համալիր
- Վերադարձ Երևան
- Ընթրիք
- Գիշերային համերգ «Նարեկացի» ժողովրդային գործիքներու նուագախումբ

Օգոստոս 30

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Այցելութիւն Մակարավանք համալիր
- Խրախճանք Դիլիջանի անտառներուն մէջ, խորովածի սպասարկում և զիւղ զուտնայով նուագախումբ
- Այցելութիւն Դիլիջան քաղաք
- Ընթրիք Դիլիջանի մէջ
- Վերադարձ Երևան

Օգոստոս 31 – Արցախ

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Մեկնում Ախատրանս հիւրանոցին
- Այցելութիւն Նորավանք վանական համալիր
- Ճաշ Նշնգեանձորի «Լճակ» ճաշարանին մէջ
- Ուղեւորութիւն Որոտանի կիրճով դէպի Տաթև վանական համալիր (9-10-րդ դ.)
- Պտուղ աշխարհի ամենաերկար «Տաթևի Թեւեր» ճուղանաղով (5,7 քմ.)
- Ժամանում Մոնեփանակերտի «Արցախ Փարք» հիւրանոց
- Ընթրիք

Սեպտեմբեր 1

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Այցելութիւն հայդուկապետ Նիկոլ Դումանի տուն թանգարան
- Այցելութիւն հնագոյն Տիգրանակերտ քաղաքի պեղութեամբայր
- Ճաշ «Վալերա» հիւրանոցին մէջ
- Այցելութիւն Հայկական Բանակի գորանոց, գորանանդէս
- Այցելութիւն Զուշի
- Այցելութիւն Մարք Ամենայրկիչ Ղազանչեցոց եկեղեցի
- Ընթրիք Զուշիի ճաշարանին մէջ
- Վերադարձ Մոնեփանակերտ

Սեպտեմբեր 2

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Շրջայց Վանք գիւղին մէջ, ծանօթացում գիւղական տնտեսողներուն, հանդիպում գիւղացիներու հետ
- Չիարշաւ
- Արցախեան աւանդական ուտեստներու՝ խոտարդոնքով ժենկիայով հացի համոտես, Իսպեն գետի ափին և խրախճանք գիւղացիներուն հետ
- Այցելութիւն Գանձաւար վանական համալիր:
- Երեկոյեան Մոնեփանակերտի հրապարակին մէջ Առնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան օրուան տօնակատարութեան մասնակցութիւն, համերգներ
- Վերադարձ հիւրանոց
- Ընթրիք

Սեպտեմբեր 3

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Ուղեւորութիւն դէպի Մարտունիի շրջան, Ամարասի վանք (4-րդ դ., վանքը 3-րդ դարու սկիզբը հիմնած է Գրիգոր Լուսաւորիչը, կառուցումը աւարտած է անոր թոռը՝ Գրիգորիս եպիսկոպոսը)
- Ուղեւորութիւն դէպի Միտորաշէն գիւղ, այցելութիւն Տեղի ծառ, (Միտորաշէն գիւղի մօտակայքը վեր կը խոյանայ հսկայական չինարի մը: Այն առկի քան 2000 տարեկան է):
- Ղաշտային ճաշ
- Վերադարձ Մոնեփանակերտ
- Ընթրիք

Սեպտեմբեր 4

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Ուղեւորութիւն դէպի Քարվաճառի շրջան
- Այցելութիւն Դադիվանք, Կառուցում Թադէոս առաքելի հետնորդ Դադլ առաքելի կողմ Ա. դարան
- Այցելութիւն Հանդիվանք
- Այցելութիւն ազատագրուած Եղեղնուտ գիւղ՝
- Այցելութիւն 237 Դանատայի Պատանեկան Միութեան կողմէ կառուցուած «Վիզլի Զարարեան» մանկապարտէզ
- Ճաշ բնութեան մէջ
- Այցելութիւն Զերմաջուր, բնական տաք հանքային ջուրի աղբիւր
- Վերադարձ Սեան Վարդենիսի ճանապարհով
- Իջեանեղ Սեանայ լիճի Ծովասար հիւրանոց
- Ընթրիք Սեանի մէջ

Սեպտեմբեր 5

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Հանգիստ Սեանայ լիճի ափին
- Ճաշ
- Մասնակցութիւն աւանդական հայկական խորովածի պատրաստման
- Ընթրիք

Սեպտեմբեր 6

- Նախաճաշ հիւրանոցին մէջ
- Հանգիստ Սեանի ափին
- Ճաշ
- Այցելութիւն Սեանավանք
- Այցելութիւն Արովեանի նորակառոյց Մուրք Յովհաննէս եկեղեցի
- Վերադարձ Երևան
- Իջեանեղ Երևանի Ախատրանս հիւրանոց
- Ընթրիք և հայկական նուագախումբով խրախճանք

Սեպտեմբեր 7

Ազատ օր Երևանի մէջ

Սեպտեմբեր 8

Նախաճաշ հիւրանոցին մէջ
Մեկնում Ջուարթնոց օդակայան





Noor Fine Food™
Gourmet Mediterranean Cuisine



صحّة و عافية Saha & Afia



1 High Meadow Place, Unit 9, Toronto, Ontario M9L 0A3

Tel 416 745 3111 | Fax 416 745 9337

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ

«Բանաձեւել» հայեցիմ

Չակերտները՝ չեչտելու համար դժուարութիւնը, որ կը ցցուի առջեւդ, երբ կը փորձես խօսքի վերածել հայեցի բառով արտայայտուած հասկացութիւնը:

Եթէ բառարաններուն դիմենք, այդքան բարդ չ'երեւիր բառը: Մալխասեան զայն կը սահմանէ իբր հին բառ, երեք իմաստով՝ 1. Ազգով հայ. 2. Հայերէն լեզուով. 3. Հայ, հայկական:

Եթէ այսքանով գոհանայի, սակայն, այս յօդուածը գրելու կարիքը չէի զգար: Փաստօրէն բառը այսօր քիչ մը տարբեր, ժամանակակից դարձուածք մը ստացած է: Ատիկա նկատեր է Արամ Թարլեզիզեան, որ իր «Հայերէն–Ֆրանսերէն բառարան»–ին մէջ (ԵՊՀ, Երեւան 2009) զայն սահմաներ է որպէս dans un esprit arménien, իսկ հայեցիութիւնը՝ որպէս esprit arménien:

Ի հարկէ հայկական ոգին «ոգեկոչելով» հարցը աւելի կը կնճռոտի, քանի որ այս անգամ այդ ոգի'ն սահմանելու, յստակացնելու կամ ճշգրտելու ստիպողութեան տակ կը գտնուինք: Ատենին «Հորիզոնի կլոր սեղանին շուրջ» (այդպէս վերտառութիւն մը ունէին այն էջերը) այդ մասին հաւաքական գրաւոր հարցազրոյցի մը ընթացքին Վահէ Օշական կը գրէր, որ լաւագոյն մօտեցումը այդ մասին չխօսիլն է...

Որպէսզի աւելի չմխրճուինք բնագանցական ոլորտներու մէջ, վերադառնանք բառին ու նայինք անոր ներկայ գործածութեան, որ առաւելաբար կրթութիւն կամ դաստիարակութիւն բառերուն կ'ընկերանայ, — հայեցի կրթութիւն, հայեցի դաստիարակութիւն...

Այդ է, որ կ'անկկայենք մեր վարժարաններէն ու համոզուած ենք, որ անոր տուչութեամբ է, որ հայ դպրոցը իր առաքելութիւնը ի կատար կ'ածէ: Սակայն չենք գիտակցիր, որ իւրաքանչիւր ի'ր պատկերացումը ունի այդ առաքելութեան, աւելի ճիշտ՝ այդ հայեցի բառին: Հո՛ս է, որ կը ծագի զայն բանաձեւելու անհրաժեշտութիւնը. բանաձեւել այնպէս, որ բաւականին ընդհանրական ըլլայ ու ներառէ շատերուս պատկերացումները:

Խնդիրը այն է, որ այդ պատկերացումներն ալ հիմնուած են մեր հայ ըլլալու հասկացողութեան վրայ, որ նոյնպէս բազմաշերտ, բազմերես, բազմիմաստ է: Կարելի՞ է օրէնքներ դնել ու յայտարարել, թէ այն, որ այդ օրէնքները կը յարգէ՝ հա՛յ է, ան որ չի՛ր յարգեր՝ հայ չէ: Կամ պայմաններ դնել ու այդ պայմանները չլրացնողը դուրս չպրտել հայութենէն: Կարելի չէ: Ամենէն չսպասուած պահու մը, ամենէն չակնկալուած մէկէն յանկարծ կրնաս լսել բարձրադաշակ բացականչութիւն մը՝ «ես հա՛յ եմ», կամ՝ «ե՛ս ալ հայ եմ»:

Մեր ընելիքը քիչ մը աւելի կը դիւրանայ, եթէ այս բոլորը մէկ կողմ դնենք ու փորձենք պարզապէս

սահմանել, թէ մեր վարժարանները ի՞նչ տեսակ կրթութիւն տալու են, որպէսզի ան ըլլայ հայեցի: Անմիջապէս ըսեմ, որ այդ կրթութիւնը տարբեր կրնայ ըլլալ Հայրենիքի ու Սփիւռքի համար, տարբեր՝ գաղթօճախէ՝ գաղթութեան ու իր յետին մանրամասնութիւններուն մէջ՝ վարժարանէ՝ վարժարան, քանի որ մեր կրթարանները ամպերուն մէջ չեն գտնուիր, այլ շօշափելի իրականութիւններու մէջ եւ չեն կրնար գերծ ըլլալ շրջապատի պայմաններէն ու իւրայատկութիւններէն: Այսուամենայնիւ, կրնանք թերեւս լայն շրջագիծի մը մէջ փորձել դնել այն ամենը, որ հայ դպրոցի ջամբած ուսումը, կրթութիւնը կամ դաստիարակութիւնը զանազանուին ուրիշ դպրոցներէ, — բազում հանգիստութիւններ ունենալով հանդերձ անոնց հետ, — այդ զանազանումով ալ արդարացնեն մեր կրթարաններու գոյութիւնը:

Կրթութիւնը, հայեցի ըլլալ կամ ոչ, երեք ոլորտներու մէջ կը կատարուի.

- Անհատական արժէքներ.
- Ազգային կամ տեղական արժէքներ.
- Համամարդկային արժէքներ:

